# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի
## ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 71-Լ

«12» սեպտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023Թ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.
**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | [signature] | | | 9. Վահան Հախվերդյան | [signature] | | |
| 2. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 10. Հրաչյա Ավետիսյան | [signature] | | |
| 3. Նաիրա Բասենցյան | [signature] | | | 11. Աննա Կիրակոսյան | [signature] | | |
| 4. Արամայիս Միրզոյան | [signature] | | | 12. Սնակ Խաչատրյան | [signature] | | |
| 5. Ներսես Մելիքյան | [signature] | | | 13. Նաիրա Գրիգորյան | [signature] | | |
| 6. Վարդան Գրիգորյան | [signature] | | | 14. Նորայր Օհանյան | [signature] | | |
| 7. Կարեն Մովսիսյան | [signature] | | | 15. Էդգար Թամազյան | [signature] | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | [signature] | | | 16. Արմեն Դավթյան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*Վաղարշապատ համայնքի ավագանու*
*Չորրորդ նստաշրջանի*
*2023 թվականի սեպտեմբերի 12-ի*
*առաջին նիստի թիվ 71-Լ որոշման*

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 - Ի N 166-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 168 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 4-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 72-Ն

«12» սեպտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 - Ի N 166-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Վաղարշապատ համայնքի 2023թ. բյուջեի հաստատման մասին» թիվ 166-Ն որոշման և նշված որոշմամբ հաստատված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատվածների մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | | 9. Վահան Հախվերդյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | | 10. Հրաչյա Ավետիսյան | | | |
| 3. Նաիրա Բասենցյան | | | | 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 4. Արամայիս Միրզոյան | | | | 12. Սևակ Խաչատրյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 13. Նաիրա Գրիգորյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 14. Նորայր Օհանյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 15. Էդգար Թամազյան | | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | | | | 16. Արմեն Դավթյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի
ավագանու 12 սեպտեմբեր 2023թ.
թիվ 72 - Ն որոշմամբ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 1 ՀԱՏՎԱԾԸ

1. Բյուջեի եկամուտներ՝ հատված 1

Հազար դրամ

| No | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ.ծրագիր |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 2204664.0 |
| 1 | ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 501000,0 |
| 1.1 | Անշարժ գույք | 100000.0 |
| 1.2 | Գույքահարկ շենքերից | 30000,0 |
| 1.3 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 351000,0 |
| 1.4 | Հողի հարկ | 20000,0 |
| 2 | ՏՈՒՐՔԵՐ | 103160.0 |
| 2,1 | Պետական տուրքեր | 34000,0 |
| 2,2 | Տեղական տուրքեր | 69160.0 |
| 3 | ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 450861.1 |
| 3,1 | Գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ | 37734.6 |
| 3,2 | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 2000.0 |
| 3,3 | Տեղական վճարներ | 392126.5 |
| 3,4 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 19000,0 |
| 5 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | 1149642.9 |
| 5,1 | Դոտացիա | 821975.3 |
| 5,2 | Այլ դոտացիա | |
| 5,3 | Այլ ընթացիկ դրամաշնորհ /զինծառայողներ/ | 240.0 |
| 5,4 | Փոխատվություններ /սուբվ./ | 3050.4 |
| 5,5 | Պատվիրակ. լիազոր. իրական. համար ստացվող միջ. | 5997.0 |
| 5,6 | Միջազգային կազմակերպություն /ֆոնդային/ | 5397.5 |
| 5,7 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 312982.7 |
| 6 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | |

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 2 ՀԱՏՎԱԾԸ

2. Բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման ՝ հատված 2

Հազար դրամ

| No | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ. ծրագիր |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 327459.7 |
| 1,1 | Տեղական ինքնակառավարում | 327459.7 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ | 634626.1 |
| 2,1 | Նախադպրոցական դաստիարակություն | 406520.8 |
| 2,2 | Արտադպրոցական կրթություն | 228105.3 |
| 3 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) | 20000,0 |
| 4 | ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ | 261205.7 |
| 4,1 | Գրադարաններ | 37863.3 |
| 4,2 | Մշակույթի տներ | 39641.8 |
| 4,3 | Թանգարաններ | 16715.6 |
| 4,4 | Սպորտ | 118525.0 |
| 4,5 | Այլ ծրագրեր | 48460.0 |
| 5 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 660312.5 |
| 6 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -266000.0 |
| 7 | ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ | 854039.9 |
| 7,1 | Կապիտալ տրանֆերտ | 312982.7 |
| 7,2 | Միջազգային կազմակերպություն | 5397.5 |
| 7,3 | Այլ ծրագրեր /ֆոնդ. բյուջե/ | 535659.7 |
| 7,4 | Վարչական մասի պահուստային ֆոնդ | |

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԹԻՎ 3 ՀԱՏՎԱԾԸ

3. Բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման ՝ հատված 3

Հազար դրամ

| No | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ. ծրագիր |
|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 2941643.9 |
| Ա | Ընթացիկ ծախսեր | 1903604.0 |
| | Աշխատավարձ | 628312.0 |
| | Էներգետիկ ծառայություններ | 94803.3 |
| | Կոմունալ ծառայություններ | 1625.9 |
| | Կապի ծառայություններ | 5711.0 |
| | Ապահովագրական ծախսեր | 3700.0 |
| | Ներքին գործուղումներ | 500,0 |
| | Արտասահմանյան գործուղում | 3000,0 |
| | Համակարգչային ծառայություն | 500,0 |
| | Տեղեկատվական ծառայություններ | 1000,0 |
| | Ներկայացուցչական ծախսեր | 1500,0 |
| | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 48000.0 |

| | | |
|---|---|---|
| | Մասնագիտական ծառայություն | 3000,0 |
| | Շենք. և կառույց. ընթաց. նորոգ. | 56356.8 |
| | Մեք. և սարք. ընթ. նորոգում. | 5500,0 |
| | Գրասենյակային նյութեր և հագուստ | 10100.0 |
| | Տրանսպորտային նյութեր | 99180.0 |
| | Առողջապահական և լաբորատոր նյութեր | 500,0 |
| | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 1000,0 |
| | Հատուկ նպատակային այլ նյութեր | 41343.2 |
| | Սոց. օգնության նպաստներ բյուջեից | 32240.0 |
| | Սուբսիդիաներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | 847371.8 |
| | Ընթացիկ դրամաշնորհներ միջազ. կազմակերպություններին | 600,0 |
| | Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 1960,0 |
| | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 8800.0 |
| | Այլ հարկեր | 4000,0 |
| | Քաղաքացիական պաշտպանություն | 3000,0 |
| | Պահուստային ֆոնդ | |
| Բ | Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր | 854039.9 |
| | Նախագծահետազոտական ծախսեր | 26345.0 |
| | Շենք. շինությ. կապ. նորոգ. | 796694.9 |
| | Տրանսպորտային սարքեր | |
| | Վարչական սարքավորումներ | 29000.0 |
| | Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր | 2000.0 |
| | Պահուստային ֆոնդ | |
| Գ | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | -266000,0 |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | -14000,0 |
| | Հողի իրացումից մուտքեր | -252000,0 |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | |
| | Կապիտալ տրանսֆերտ | |
| | Միջազգային կազմակերպ. մուտքեր | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշատ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28 - ի N 166-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունը.

1. Հիմք ընդունելով Իսսի Տուրիզմ Էնտերնասիոնալի /Ֆրանսիայի Իսսի-լե-Մուլինո քաղաքի համաձայնությամբ/ և Վաղարշապատի համայնքապետարի միջև կնքված համաձայնագիրը.

1.1. Ավելացնել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների <Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով> 1241 տողը 5397.47 հազ. դրամ:

1.2. Բյուջեի ֆոնդային մասի ծախսը ավելացնել 5397.47 հազ. դրամ և ուղղել նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/:

1.3. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 73-Լ

«12» սեպտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերի և 92-րդ հոդվածի 4-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի N ՎՏ/14.2/22283-2023 գրությունը 2023 թվականի ապրիլի 17-ից մայիսի 17-ը Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից համաֆինանսավորվող Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /ԳՄՀ, GIZ/ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործող ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի նոր փուլով հայտարարված ծրագրային հայտ-առաջարկներից երկաստիճան գնահատման արդյունքում, առավելագույն միավորներ ստացած 25 ծրագրերը արժանացել են ֆինանսավորման: Այդ համայնքներից արժանացել է նաև Վաղարշապատի համայնքապետարանը: Ծրագրի ամբողջ գումարը կազմում է 18 541 600 /տասնութ միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, որից Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /ԳՄՀ/ կողմից հատկացվելու է 15 990 000 /տասնհինգ միլիոն ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ, իսկ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից 2 551 600 /երկու միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Համայնքի ավագանին**

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ֆինանսավորումը ստանալու նպատակով թույլ տալ Վաղարշապատի համայնքապետարանին բացել արտաբյուջետային հաշիվ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | | 9. Վահան Հախվերդյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | | 10. Հրայա Ավետիսյան | | | |
| 3. Նաիրա Բաանեցյան | | | | 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 4. Արամայիս Միրզոյան | | | | 12. Սնակ Խաչատրյան | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5. Ներսես Մելիքյան | ______ | ______ | ______ | 13. Նաիրա Գրիգորյան | ______ | ______ | ______ |
| 6. Վարդան Գրիգորյան | ______ | ______ | ______ | 14. Նորայր Օհանյան | ______ | ______ | ______ |
| 7. Կարեն Մովսիսյան | ______ | ______ | ______ | 15. Էդգար Թամազյան | ______ | ______ | ______ |
| 8. Գոհար Նիկողոսյան | ______ | ______ | ______ | 16. Արմեն Դավթյան | ______ | ______ | ______ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

**№ ՎՏ/14.2/22283-2023**

ՀՀ համայնքների ղեկավարներին
(ըստ ցուցակի)

Հարգելի՛ գործընկերներ

Ս.թ. ապրիլի 17-ից մայիսի 17-ը Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից համաֆինանսավորվող Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործողՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) նոր փուլով հայտարարվել էր ծրագրային հայտ-առաջարկների կանչ:

Կանչի շրջանակներում ՀՀ 55 համայնքներից ստացվել է 74 ծրագրային հայտ-առաջարկ:Հայտերի գնահատումը, ինչպես սահմանված է Հիմնադրամի հայեցակարգային դրույթներում, իրականացվել է երկու փուլով՝ համայնքների տնտեսական զարգացման աշխատանքային խմբի (ՀՏԶ ԱԽ) կողմից (սահմանված սանդղակին համապատասխան) և Գնահատող հանձնաժողովի (բաղկացած ՏԿԵՆ և ԳՄՀԸ ներկայացուցիչներից): Գնահատման գործընթացը ներառել է նաև փորձագիտական այցեր որոշ համայնքներ, ինչը հնարավորություն է տվել տեղում ծանոթանալ կարիքներին և ծրագրերի առանձնահատկություններին:

Երկաստիճան գնահատման արդյունքում, հաշվի առնելով Հիմնադրամի ֆինանսական ծավալները, առավելագույն միավորներ ստացած 23 ծրագրերը արժանացել են ֆինանսավորման: Դրանց ցանկը տեղադրված է ՀՀ ՏԿԵՆ կայքէջում,հետևյալ հղմամբ՝https://mtad.am/news/1480 :

Միևնույն ժամանակ, խնդրում ենք նկատի ունենալ, որ մյուս ծրագրերը մնում են Հիմնադրամի բազայում, և հավելյալ միջոցների ներգրավման պարագայում դրանց իրականացման համար ևս կարող է տրամադրվել ֆինանսավորում, ինչի մասին լրացուցիչ տեղեկատվություն կպահովվի: Հիմնադրամը՝ ՏԿԵՆ-ի հետ համագործակցությամբ ձևավորում է համայնքային ծրագրային հայտերի պահոց, որը կգործադրվի լրացուցիչ ֆինանսավորման հայթայթման պարագայում:

X

Հարգանքով՝

Վ.Տերտերյան

Կատարող՝ Համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ, Ե. Դավթյան
Հեռ. 010515122

## Ֆինանսավորում ստացած համայնքների ցանկ

| | Մարզ | Համայնք | Ծրագրի անվանում |
|---|---|---|---|
| 1. | Արագածոտն | Ապարան | Աղբավայրի բարեկարգում |
| 2. | | Միջհամայնքային՝ Ապարան-Ծաղկահովիտ | Սոցիալական ծառայությունների հասանելիություն և ներառականություն |
| 3. | Արարատ | Արտաշատ | 5 բնակավայրում բացօթյա մարզահրապարակների կառուցում |
| 4. | Արմավիր | Վաղարշապատ | Խաղադաշտի կառուցում |
| 5. | Գեղարքունիք | Մարտունի | Մարտունի ԲԿ-ի լաբորատորիայի արդիականացում |
| 6. | | Սևան | Ժամանակակից լուսակիրների տեղադրում |
| 7. | Լոռի | Ալավերդի | Աքորու մանկապարտեզի վերանորոգում և կահավորում |
| 8. | | Գյուլագարակ | 5 ՀՈԱԿ-ներում արևային համակարգերի տեղադրում |
| 9. | | Ստեփանավան | Հանրային տարածքի բարեկարգում |
| 10. | | Վանաձոր | 4 «խելացի կանգառների» տեղադրում |
| 11. | | Փամբակ | Դեբետում խմելու ջրի ցանցի կառուցում |
| 12. | | Ֆիոլետովո | Գյուղտեխնիկայի ձեռքբերում |
| 13. | Կոտայք | Արզական | 5 ՆՈՒՀ-երում արևային համակարգերի տեղադրում |
| 14. | | Ակունք | Կապուտանի նախակրթարանի գույքի ձեռքբերում |
| 15. | | Բյուրեղավան | Պոլիկլինիկայի համար հետազոտական սարքավորումների ձեռքբերում |
| 16. | | Նաիրի | Զբոսայգու բարեկարգում |
| 17. | | Չարենցավան | Քաղաքային զբոսայգու ոռոգման համակարգի վերակառուցում |
| 18. | Շիրակ | Ամասիա | Ողջի և Բյուրակն բնակավայրերի խմելու ջրագծերի վերանորոգում |
| 19. | Սյունիք | Կապան | Թիվ 9 ՆՈՒՀ-ի գույքի ձեռքբերում |
| 20. | | Տաթև | Տաթև և Սվարանց բնակավայրերում գիշերային լուսավորության ցանցի կառուցում |
| 21. | Վայոց ձոր | Եղեգիս | Աղնջաձոր և Շատին գյուղերի ոռոգման համակարգի կառուցում |
| 22. | | Եղեգնաձոր | Անդրանիկի փողոցի ոռոգման ցանցի կառուցում և Խանջյան փողոցի ոռոգման ցանցի վերանորոգում |
| 23. | Տավուշ | Նոյեմբերյան | Գեղարվեստի դպրոցի վերանորոգում և հնարավորությունների ընդլայնում |

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 74-Ն

«12» սեպտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 168 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 4-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածնի քաղաքային համայնքի «Բարեկարգում» բյուջետային հիմնարկի պետի 30.08.2023 թվականի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Համայնքի ավագանին***

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 168 որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Աշխատակիցների քանակը «71» փոխել «72»-ի:

2) «Տնօրենի տեղակալ» հատվածում սահմանված՝ միավոր «1» փոխել «2»-ի, աշխատավարձի ֆոնդ «260 000» փոխել «520 000»-ի:

3) Ավելացնել «Գլխ.հաշվապահի օգնական» հաստիքը միավոր «1», դրույքաչափ 140 000», աշխատավարձի ֆոնդ «140 000»:

4) Նույն մասի ընդամենը տողում գրված՝ միավոր «4» փոխել «6»-ի, աշխատավարձի ֆոնդ «910 000» փոխել «1 310 000»-ի:

5) «Լուսավորություն» տեղամաս մասում հանել «Պետի տեղակալ» հաստիքը 1 միավորով, 210 000 դրույքաչափով, 210 000 աշխատավարձի ֆոնդով:

6) Նույն մասի ընդամենը տողում գրված՝ միավոր «6» փոխել «5»-ի, աշխատավարձի ֆոնդ «1 020 000» փոխել «810 000»-ի:

7) Հավելվածի ընդամենը տողում գրված՝ «71» փոխել «72»-ի, «10,327,200» միավորի փոխարեն կարդալ՝ «10,517,200» թվերը,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | [signature] | | | 9. Վահան Հախվերդյան | [signature] | | |
| 2. Արսեն Պետրոսյան | [signature] | | | 10. Հրաչյա Ավետիսյան | [signature] | | |
| 3. Նաիրա Բասենցյան | [signature] | | | 11. Աննա Կիրակոսյան | [signature] | | |

4. Արամայիս Միրզոյան ______ ______ ______

5. Ներսես Մելիքյան ______ ______ ______

6. Վարդան Գրիգորյան ______ ______ ______

7. Կարեն Մովսիսյան ______ ______ ______

8. Գոհար Նիկողոսյան ______ ______ ______

12. Սնակ Խաչատրյան ______ ______ ______

13. Նաիրա Գրիգորյան ______ ______ ______

14. Նորայր Օհանյան ______ ______ ______

15. Էդգար Թամազյան ______ ______ ______

16. Արմեն Դավթյան ______ ______ ______

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 4
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
Ավագանու 28.12.2022թ.
թիվ 168 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու 12.09.2023թ.
Թիվ 74-Ն որոշմամբ

**2023թ. համար <<Բարեկարգում>> տնօրինության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

1. Աշխատակիցների քանակը 72

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքը | Միավոր | Դրույքաչափ | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 310000 | 310000 |
| 2 | Տնօրենի տեղակալ | 2 | 260000 | 520000 |
| 3 | Գլխ. հաշվապահ | 1 | 210000 | 210000 |
| 4 | Գլխ. Հաշվապահի օգնական | 1 | 140000 | 140000 |
| 5 | Առաջատար մասնագետ | 1 | 130000 | 130000 |
| Ընդամենը | | **6** | | **1,310,000** |
| <<Բարեկարգում և կանաչապատում>> տեղամաս | | | | |
| 1 | Պետ | 1 | 250000 | 250000 |
| 2 | Պետի տեղակալ | 1 | 237000 | 237000 |
| 3 | Տեսուչ /պայմանագրային/ | 1 | 125000 | 125000 |
| 4 | Բանվոր | 8 | 163000 | 1304000 |
| 5 | Զոդող | 1 | 140000 | 140000 |
| 6 | Էլեկտրիկ | 1 | 95700 | 95700 |
| 7 | Գյուղատնտես | 1 | 175000 | 175000 |
| 8 | Վարորդ | 1 | 140000 | 140000 |
| 9 | Բանվորներ /9 ամիս/ | 16 | 163000 | 2608000 |
| 10 | Ջրվոր /9 ամիս/ | 2 | 95700 | 191400 |
| 11 | Ջրբաժան /9 ամիս/ | 6 | 95700 | 574200 |
| 12 | Այգիների հսկիչ /9 ամիս/ | 8 | 95700 | 765600 |
| 13 | Այգու հավաքարար | 3 | 95700 | 287100 |
| 14 | Վարորդ ինքնաթափի | 1 | 165000 | 165000 |
| 15 | Վարորդ | 1 | 165000 | 165000 |
| 16 | Ավագ էլեկտրիկ | 1 | 140000 | 140000 |
| 17 | Պահակ | 2 | 95700 | 191400 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **55** | | **7,554,400** |
| <<Լուսավորություն>> տեղամաս | | | | |
| 1 | Պետ | 1 | 250000 | 250,000 |
| 2 | Ճարտարապետ-էլեկտրիկ | 1 | 140000 | 140,000 |
| 3 | Արտաքին-լուսավորության էլեկտրիկ | 1 | 140000 | 140,000 |
| 4 | Ամբարձիչի վարորդ | 2 | 140000 | 280,000 |
| | | **5** | | **810,000** |
| <<Գերեզմանատուն>> տեղամաս | | | | |
| 1 | Պետ | 1 | 250000 | 250,000 |
| 2 | Պետի տեղակալ | 1 | 210000 | 210,000 |
| 3 | Պահակ | 4 | 95700 | 382800 |
| Ընդամենը | | **6** | | **842,800** |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **72** | | **10,517,200** |

1974 թվականի հունվարի մեկից հետո ծնված և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարի գումարը փոխհատուցելու նպատակով փոխհատուցման գումարի չափով նախատեսվում է հավելավճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«Բ Ա Ր Ե Կ Ա Ր Գ Ո Ւ Մ»
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663 - 112

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ДИРЕКЦИЯ
"Б А Р Е К А Р Г У М"
МЭРИИ ГОРОДА
ВАГАРШАПАТ

РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663 - 112

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, "BAREKARGUM" DIRECTORATE OF THE MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
0 St. M. Mashtots Str., 1101, Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663 - 112

№ 52

«30» 08 202 թ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԿԻՆ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

## ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Խնդրում եմ Ձեզ, «Բարեկարգում» տնօրինության «Լուսավորություն» տեղամասի պետի տեղակալի հաստիքը կրճատել, քանի որ այդ տեղամասում աշխատանքները լիարժեք կատարվում են, սակայն «Բարեկարգում» տնօրինությունում անհրաժեշտ է ավելացնել տնօրենի տեղակալի ևս մեկ հաստիք, քանի որ շինարարական աշխատանքների ծավալների մեծացման հետևանքով, այս կազմով, հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքների չափագրում, վերահսկում, շին.ակտերի ստուգում, ինչպես նաև, վերոնշյալ աշխատանքների ծավալների մեծացման հետ կապված՝ անհրաժեշտ է ավելացնել նաև գլխավոր հաշվապահի օգնականի հաստիք:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

"БАРЕКАРГУМ"
"BAREKARGUM"
04711468

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 75-Լ

«12» սեպտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Համայնքի ավագանին**

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանել՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Հ/Հ Ազգանուն Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Դիանա Գասպարյան | | | | 9. Վահան Հախվերդյան | | | |
| 2. Արսեն Պետրոսյան | | | | 10. Հրաչյա Ավետիսյան | | | |
| 3. Նաիրա Բասենցյան | | | | 11. Աննա Կիրակոսյան | | | |
| 4. Արամայիս Միրզոյան | | | | 12. Սնակ Խաչատրյան | | | |
| 5. Ներսես Մելիքյան | | | | 13. Նաիրա Գրիգորյան | | | |
| 6. Վարդան Գրիգորյան | | | | 14. Նորայր Օհանյան | | | |
| 7. Կարեն Մովսիսյան | | | | 15. Էդգար Թամազյան | | | |
| 8. Գոհար Նիկողոսյան | | | | 16. Արմեն Ղավթյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ